

ՀԱԱՀ արտաքին կապերի դեպարտամենտի 2015 թ. գործունեության վերլուծություն

Արտաքին կապերի դեպարտամենտի գործունեության վերլուծության նպատակը դեպարտամենտի թույլ և ուժեղ կողմերի բացահայտումն է, թերությունների վերացման պլանի կազմումը, աշխատանքի արդյունավետության բարձրացումը:

Վերլուծության համար համար հիմք են հանդիսացել քննարկումները, գրավոր և բանավոր հարցախոյզերը, ներքին և արտաքին շահակիցների կարծիքները:

2015 թ. դեպարտամենտի գործունեության վերլուծություն	
ուժեղ կողմեր	թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • ՀԱԱՀ-ն ունի արտասահմանյան երկրների բուհերի և կազմակերպությունների հետ համագործակցության երկարատև փորձ • ՀԱԱՀ-ը ներգրավված է ակադեմիական շարժունության տարաբնույթ միջազգային ծրագրում • Նախորդ ծրագրերի արդյունավետ իրականացում • Դեպարտամենտի աշխատանքը թափանցիկ է, քանի որ դրամաշնորհների վերաբերյալ բոլոր հայտարարությունները տեղադրվում են համալսարանի կայքում 	<ul style="list-style-type: none"> • Միջազգային և տարածաշրջանային գիտաժողովների և դասընթացների կազմակերպման, արտասահմանյան բուհեր գործուղուման մեկնելու, ինչպես նաև արտասահմանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին և կոնֆերանսներին մասնակցելու համար սեփական ֆինանսական միջոցների անբավարարություն • Օտար լեզվով դասավանդվող մասնագիտությունների և դասավանդող դասախոսների պակաս • ՀԱԱՀ-ի ամբիոններում արտասահմանյան այլ բուհերի նույն մասնագիտության ամբիոնների հետ ուղղակի համագործակցության թույլ կապեր • Օտար լեզվին տիրապետող ուսանողների քանակի նվազում, լեզվի տիրապետման ընդհանուր մակարդակի նվազում • Հայտատարությունների տարածման հնարավորությունների պակաս:

Դեպարտամենտի պետի պաշտոնակատար՝



Գ. Համբարձումյան

30.06.2016